

Քննարկում մարզպետարանում՝ «Երզր բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական երրորդ փառատոնի կազմակերպման շուրջ

Ռուսաստանի հայերի միության և Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի նախաձեռնությամբ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի հանրակրթական բոլոր դպրոցներում անց է կացվում «Երզր բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական երրորդ փառատոնը:

Ներկայումս սկսվել են նախապատրաստական աշխատանքները: Կազմակերպչական հարցեր քննարկելու նպատակով փառատոնի կազմկոմիտեի անդամները՝ Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ, Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի նախագահ Վլադիմիր Աղայանի ղեկավարությամբ, սեպտեմբերի 3-ին այցելեցին ՀՀ Արագածոտնի մարզպետարան: Փոխմարզպետ Նունե Մովսիսյանի մոտ տեղի ունեցավ խորհրդակցություն, որտեղ քննարկվեցին փառատոնի կազմակերպման հետ նկատված մի շարք հարցեր, ճշգրտվեցին մանրամասներ:

Վլադիմիր Աղայանը նշեց, որ փառատոնի նպատակն է Հայաստանի դպրոցականներին հաղորդակից դարձնել ռուս ժողովրդի մշակութային և հոգևոր արժեքներին, նպաստել Ռուսաստանի, ռուսական մշակույթի և ռուսաց լեզվի նկատմամբ նրանց հետաքրքրության բարձրացմանը, ինչպես նաև Հայաստանի ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի նկատմամբ ստեղծված բարենպաստ հասարակական կարծիքի պահպանմանն ու հետագա խորացմանը:

Առաջին փառատոնն անցկացվել է 2010 թվականին, որի հաջողությամբ էր պայմանավորված նաև այն փաստը, որ դարձավ ավանդական: Այն կազմակերպվելու է 3 փուլով՝ տարածքային, մարզային և հանրապետական: Ծրագրի շրջանակում կազմակերպվելու են ռուսական պոեզիայի երեկոներ, գրական-երաժշտական կոմպոզիցիաներ, ռուսաց լեզվի բաց դասեր, լեզվի վարպետության դասեր և ռուսական երգի լավագույն կատարման մրցույթ:

Ամփոփելով կազմակերպչական աշխատանքների նախապատրաստական ընթացքը, փոխմարզետ Ն. Մովսիսյանն ասաց, որ մարզում փառատոնը լավագույնս է կազմակերպվել նախորդ երկու տարիներին: Այդ առումով լավ ավանդույթներ են ձեռավորվել, որոնց հիման վրա փառատոնը հաջողությամբ կանցկացվի նաև այս տարի:

